ՀՏԴ 929:070(479.25) Դևրիկյան + 891.981.09

Doi:10.54503/0135-0536-2024.2-284

ՀՈՒՇ-ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ՝ ՎԱՐԴԱՆ ԴԵՎՐԻԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ*

Մայիսի 18-ին լրացավ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի երջանկահիշատակ տնօրեն, բ. գ. դ. Վարդան Դևրիկյանի ծննդյան 60-ամյակը:

Մայիսի 21-ին Գրականության ինստիտուտում տեղի ունեցավ Վ. Դևրիկյանի ծննդյան 60-ամյակին նվիրված միջոցառում և «Սուրբ Էջմիածնի տպարանի հիմնումը և գործունեությունը 18-րդ դարում» գրքի (Մայր Աթոռ Ս. Էջմիածին հրատ., 2022 թ.) շնորհանդեսը: Ներկաներն իրենց հարգանքի տուրքը մատուցեցին Դևրիկյան մարդուն, հայրենիքի զինվորին, գիտության անխոնջ մշակին, ով հասցրեց նաև դատերը՝ Շողակաթին, փոխանցել իր սերը դեպի գրականությունն ու արվեստը և նրա հետ համահեղինակությամբ ընթերցողի սեղանին դնել վերը նշված գիրքը:

Գրականության ինստիտուտի տնօրեն, բ. գ. թ. Հերիքնազ Ոսկանյանը, հիշատակելով Վ. Դևրիկյանի խոսքերը՝ «Ինչքան որ իմ ուժերը ներեն, միշտ պիտի փորձեմ ծառայել մեր գրականությանը, մեր մշակույթին, ինչպես նաև մեր երկրի պաշտպանությանը և մեր Եկեղեցու պայծառությանը», նշեց, որ դրանք լավագույնս են բնորոշում իրեն՝ իբրև մտավորականի, ով արարեց ու պայքարեց՝ իր սկզբունքներին անդավաճան: Գիտական գործունեությամբ, մարդկային նկարագրով, հայրենիքի նվիրյալի իր կերպարով Վ. Դևրիկյանը շարունակում և շարունակելու է ապրել իրեն ճանաչողների հիշողության մեջ. ժամանակն ի զորու չէ խամրեցնելու նրա լուսավոր հիշատակը, այնքան անշահախնդիր ու ազնիվ է անցել նա իր երկրային ուղին:

ՀՀ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Յուրի Սուվարյանը իր խոսքում ասաց, որ Վ. Դևրիկյանն անհատականություն էր, յուրօրինակ անձնավորություն, որ նույնքան ազնվորեն, նվիրումով աշխատեց Մ. Մաշտոցի անվան Մատենադարանում, Մայր Աթոռ Ս. Էջմիածինում, Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում՝ ամենուր թողնելով իրեն բնորոշ խոր հետք: Յու. Սուվարյանն ընդգծեց Վ. Դևրիկյանի մեծատառով Մարդ լինելը, գնահատեց նրա գիտական նվաճումները, նվիրվածությունն ընտանիքին, ընկերներին, վճռա-

---

** Ներկայացվել է 03. VI. 2024 թ., ընդունվել է տպագրության 10. VII. 2024 թ.:*

կանությունն ու համարձակությունը՝ լինելու առաջնագծում, պայքարելու ակադեմիայի ապագայի համար:

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի տնօրեն, արվ. դոկտ., պրոֆ. Աննա Ասատրյանը *նշեց, որ համեստ մարդ լինելով՝ Վ. Դևրիկյանը երբեք թույլ չէր տա նշել իր ծննդյան 60-ամյակը: Ծանր է նրա կորուստը, բայց նա չէր դիմանա Արցախի հայաթափմանը: Վ. Դևրիկյանը թողել է բարի հիշատակ և գիտական մեծ ժառանգություն: Իր լավագույն ստեղծագործությունն իր դուստրն է՝ Շ. Դևրիկյանը, ով Արվեստի ինստիտուտի ասպիրանտ է:*

ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ, բ. գ. դ., պրոֆ., Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ հայ հին և միջնադարյան գրականության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ Ալլիտա Դոլուխանյանն *արժևորեց Վ. Դևրիկյանի գիտական գործունեությունն ու վաստակը՝ համոզմունք հայտնելով, որ նրա մտավորականի կերպարի ձևավորման վրա մեծապես ազդեցություն է ունեցել հայագետ Ղևոնդ Ալիշանը: Վ. Դևրիկյանի բոլոր աշխատությունները մնայուն են, արժեքավոր: Դրանք գրված են պարզ, մատչելի և նվիրված են կարևորագույն խնդիրների:*

Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի գրչության կենտրոնների ուսումնասիրության բաժնի վարիչ, պ. գ. դ., պրոֆ. Կարեն Մաթևոսյանը, *գնահատելով Վ. Դևրիկյանին իբրև ընկերոջ, պարզ, անկեղծ մարդու, ում հետ մտերմությունը սկսվել էր իրենց հայրերի բարեկամությունից, նշեց, որ նա թողել է գիտական արժանի ժառանգություն՝ ունենալով լայն, համապարփակ գիտելիքներ գիտության տարբեր ուղղություններում:*

Վ. Դևրիկյանի ծննդյան 60-ամյակի առիթով հիշատակի իր խոսքը հղեց Վենետիկի Մխիթարյան միաբաններից Հայր Վահան ծայրագույն վարդապետ Օհանյանը*: Ընդգծելով, որ աստվածատուր տաղանդը գիտնականը ի սպաս էր դրել համայն հայությանը, մեր ազգային արժեքների պահպանությանը՝ նա կարևորեց հայագետի վաստակը և գործունեությունը՝ կապված նաև Վենետիկի Մխիթարյան միաբանության հետ:*

«Հայկական հանրագիտարան» հրատարակչության գլխավոր խմբագիր, տնօրեն, քիմ. գ. դ. Հովհաննես Այվազյանն *ափսոսանք հայտնեց, որ Վ. Դևրիկյանն անժամանակ հեռացավ, ուժերի ծաղկման շրջանում, թեև հասցրեց մեծ վաստակ թողնել միջնադարյան գրականության, ճեռագրագիտության, արվեստի ոլորտներում: Հանրայնորեն գործուն անհատ էր՝ քաջատեղյակ մեր պատմությանը:*

Բ. գ. դ., պրոֆ. Հենրիկ Էդոյանը *հիշեց, որ իբրև ուսանող՝ Վ. Դևրիկյանը միշտ լարվում էր քննությունների ժամանակ, թեև միշտ էլ գերազանց էր պատասխանում. մշակ էր լավագույն իմաստով՝ խոնարհ, առանց մեծամտության որևէ նշույլի: Միջնադարագետ էր և խորապես հոգևոր մարդ: Ապրում էր ոչ թե իր, այլ՝ մյուսների համար:*

Բ. գ. դ., Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի հայ հին գրականության բաժնի առաջատար գիտաշխատող Սուսաննա Հովհաննիսյանը *բարձր գնահատեց զինվորին, գրականագետին, մարդուն, որոնք Վ. Դևրիկյանի մեջ ներդաշնակ միասնություն էին կազմում: Նրա մեջ միայն ազգայինն էր, հայկականը: Նրա վերջին «խրամատը» ՀՀ գիտությունների ազգային*

ակադեմիայում էր: Պայքարը ակադեմիայի համար էր, և այդ պայքարից ոչ մի քայլ չնահանջեց:

Հուշ-հանդիսության ավարտին Հ. Ոսկանյանը ներկայացրեց Վ. Դերիկյանի և Շ. Դերիկյանի «Սուրբ Էջմիածնի տպարանի հիմնումը և գործունեությունը 18-րդ դարում» գիրքը՝ նշելով, որ այդ աշխատությամբ Վ. Դերիկյանը լրացրեց «Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում» եռահատորը (Երևան, 2012 թ., 2014 թ., 2016 թ.), լրացրեց իր ձեռագիր մատյանի վերջին էջը՝ այն նվիրաբերելով Ս. Էջմիածնին: Ընդ որում, իբրև իսկական նվիրյալ՝ ձեռագիրը լրացնելու բարդ, դժվարին ճանապարհին իր գիտելիքներն աստիճանաբար փոխանցեց դստերը՝ ներառելով նրան այդ գործում նախ իբրև պատկերների ընտրություն կատարողի, իսկ վերջին գրքում՝ համահեղինակի: Այդպես, ի սկզբանե կանխորոշելով դստեր գիտական ուղին, նպաստելով ազգային-հոգևոր գիտակցության ձևավորմանը՝ Վ. Դերիկյանն իր գրիչը փոխանցեց նրան՝ անուղղակիորեն պատվիրելով շարունակել իր գործը:

Աշխատությունը բաղկացած է նախաբանից, երկու մասից, որոնցում ներկայացված են Սիմեոն Ա Երևանցի կաթողիկոսի հայրապետության տարիներին Ս. Էջմիածնի տպարանի գործունեությունն ու հրատարակությունները, հետո նույն բաժանումով Էջմիածնի տպարանի գործունեությունն ու հրատարակությունները Ղուկաս Ա Կարնեցու կաթողիկոսության տարիներին:

Գրքի վերջաբանը հակիրճ անդրադարձ է տպարանի ճակատագրին. 1833 թ. հետո տպարանը սկսում է գործել երրորդ անգամ և գնալով՝ կատարելագործվում: Աշխատությունն ավարտվում է «Հավելվածով», որում տրվում է Ս. Էջմիածնի տպարանում XVIII դ. տպագրված գրքերի մատենագիտական նկարագրությունները:

Գիրքը լիակատար պատկերացում է տալիս Ս. Էջմիածնի տպարանի և թղթի գործարանի հիմնման պատմության, Ամստերդամի հայկական տպարանի հետ կապի, այն բոլոր անասելի դժվարությունների մասին, որոնց միջով անցել են Սիմեոն Ա Երևանցի և Ղուկաս Ա Կարնեցի կաթողիկոսները՝ գիտակցելով հայ մշակույթի ու լուսավորության տարածման գործում Ս. Էջմիածնի տպարանի դերն ու նշանակությունը:

Աշխատությունը, սակայն, չոր ու ցամաք շարադրանք չէ. հեղինակների դիտարկումների, մեկնաբանությունների շնորհիվ վերականգնվում է պատմամշակութային միջավայրը, տեսանելի են դառնում կաթողիկոսների, թուղթ պատրաստող վարպետների մարդկային նկարագրերը, ակնհայտ է դառնում հրատարակությունների թեմատիկ, ընդհանուր ուղղվածությունը, ի հայտ են գալիս նրանցում ընդգրկված ստեղծագործությունների միջև առկա իմաստային կապերը:

Գրքում հրատարակություններից շատերը ներկայացվում են իբրև արվեստի բարձրարժեք գործեր՝ համապատասխան փորագրապատկերների, մանրանկարների զուգորդությամբ և վերլուծությամբ, զուգահեռներ են տարվում հայ ձեռագրային ավանդների ու ժամանակի արևմտաեվրոպական գրքարվեստի հետ: Նշվեց, որ աշխատության մեջ միջգիտակարգային համալիր մոտեցմամբ ցույց են տրվում ժամանակի եկեղեցապատմական գործոնները, որոնցով պայմանավորված են եղել Ս. Էջմիածնի հրատարակությունները: Դերիկյանների ուշադրությունից չի վրիպել, որ այդ հրատարակությունների ընդհանուր

տրամաբանությունից դուրս մեկ գիրք է միայն տպագրվել՝ Հովսեպիոս Փլաբիոսի «Գիրք Պատմութեանց Յովսէպոսի Երրայեցւոյ արարեալ յաղագս պատերազմին Հրէից ընդ Հռովմայեցիս» (Ս. Էջմիածին, 1787 թ.): Գրքի տպագրության նախապատմության տողերում ընթերցողի մտապատկերում ուրվագծվում է հայոց պատմության հազարամյա ճանապարհի հեղինակների քաջիմացությունը. «Հովսեպիոսի գործի հրատարակությամբ սկզբնավորվում է պատմական այլաբանության միջոցով հայ ժողովրդի ազատագրության խնդիրներին և ժամանակի քաղաքական վիճակին արձագանքելը»:

«Սուրբ Էջմիածնի տպարանի հիմնումը և գործունեությունը 18-րդ դարում» աշխատությունը գրված է Մայր Աթոռի տպարանի դերի արժևորումով՝ իբրև Ս. Էջմիածնի վերածնության սկիզբ:

ՀԵՐԻՔՆԱԶ ՈՐՍԿԱՆՅԱՆ

Բ. գ. թ., ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի տնօրեն, Հայ հին և միջնադարյան գրականության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ հայ հին և միջնադարյան գրականություն, հայ դասական գրականություն: Հեղինակ է 1 մենագրության և շուրջ 35 հոդվածի: ORCID:0000-0001-6682-4043. vorskanyan.heriknaz@mail.ru